

Աշոտ Ս. Աբրահամյան
Բանաս. գիյր. թեկնածու

ՏԵՔՍՏԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՌԱՍԵԼԻ ՊԱՐԱԴՌՔՍԸ*

Այդ արահետներից մեկով անհնար է գնալ,
եթե չես գնացել մյուսներով...
Նրանք կորչում են մույթ հեռուներում:
Բայց նրանք աչքից բաց չեն թողնում իրենք իրենց:
Մարտին Հայդեգեր

Բանալի բառեր – տեքստ, տարբերակ, մեկնաբանություն,
տարածություն, հեղինակ, ընթերցող, համառոտում, հավե-
լում, հաջորդականություն, բազմություն:

Միևնույն տեքստի երբեմն իրարից խիստ տարբերվող մեկնաբանու-
թյունների առաջացման հիմքը միայն անհատական հոգեբանական կամ
մտածողական առանձնահատկությունները, գիտելիքների պաշարը կամ
պատկերացումների շրջանակը, համոզմունքները կամ նախասիրություն-
ները չեն: Դրանք, իհարկե, անչափ կարևոր, բայց ընդամենը բովան-
դակային ընկալումների տարբերությունները կանխորոշող գործոններ են,
մինչդեռ տեքստը բովանդակության և լեզվական արտահայտության գու-
գակցում է, ուստի տեքստային տարբերության մասին կարելի է խոսել
այն դեպքում, երբ կան նյութական կամ գոնե պատկերացվող տարբեր
արտահայտություններ: Տարբեր իմաստավորումները շատ հաճախ պայ-
մանավորված են լինում տեքստի ընդգրկած տարածքով և բաղադրիչների
տարածական բաշխումով:

Հատկանշական է Ու. Էկոյի պատմությունը «Վարդի անունը» վեպի մի
ընթերցողի մասին, որը փորձել է խորքային իմաստային կապ տեսնել եր-
կու հաջորդական դրվագների միջև, քանի որ դրանցում տարբեր գնահա-
տումներով գործածված է եղել նույն բառը, մինչդեռ Ու. Էկոն պնդում է,
որ այդ հարևանությունը պատահականության արդյունք է. ինքը մի էջում
այդ բառն ավելացրել է վերջին պահին՝ չհիշելով, որ այն գործածված է
նաև նախորդ էջում:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.09.2016:

1 Տե՛ս Է՞կո Մ. Заметки на полях «Имени розы» // Эко У. Имя розы. М., «Книжная палата», 1989, էջ
429-430:

ՎԼԻՄ ԿԱՄԱՆԿԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ Ը (ԺԳ) ԿՄԱՐԻ, ԹԻՎ 4 (56), ԽՈԿԿՐԱՆԵՐ-ՊԵՆԿՐԱՆԵՐ, 2016

Տարընթերցումներ առաջ բերելու տեսակետից էական են ընթերցման տարածական բնութագրերը՝ ընթերցվածի ծավալը և մասերի հաջորդականությունը, այլ կերպ ասած՝ ընթերցված տեքստի տարածական ընդգրկումը և ընթերցման ծիրը:

Ծավալային փոփոխություններից մեկն այն դեպքն է, երբ ընթերցողը փոքրացնում է տեքստի ծավալը: Հնարավոր է հատվածային ընթերցում: Այսպես՝ դասական վեպի ընթերցողը հաճախ, անտեսելով պատին կախված հրացանի կարևորության մասին իրեն քաջածանոթ պնդումները, բաց է թողնում որոշ հատվածներ, օրինակ՝ նկարագրությունները, եթե դրանք նրան ձանձրացնում են, կամ անհամբեր է և ուզում է իմանալ դեպքերի հետագա ընթացքը կամ զբաղված է և լրիվ կարդալու ժամանակ չունի, կամ պետք է գիրքը վերադարձնել գրադարան, կամ նա ուզում է ընդհանուր պատկերացում կազմել տվյալ ստեղծագործության մասին, որպեսզի առիթ եղած դեպքում գիտակի տպավորություն թողնի, կամ, ասենք, երկխոսություններն ուսումնասիրող լեզվաբան է ու նրան միայն դրանք են հետաքրքրում, և այլն: Հնդ որում նա այդպես վարվում է՝ հրաշալի հասկանալով, որ եթե հեղինակն այդ հատվածները գրել է, ուրեմն անհրաժեշտ է համարել և ցանկացել է, որ դրանք ընթերցվեն: Մեկ ուրիշը բավարարվում է հայացքը էջերի վրայով սահեցնելով՝ ամեն էջից որոշ տողեր կարդալով: Այդպես հաճախ ընթերցվում են գիտական տեքստերը, որքան էլ որ դրանք իրենց հեղինակների կարծիքով ամենախորագին ընթերցման են արժանի. փաստն այն է, որ եթե տվյալ ընթերցողին հետաքրքրում է մի որոշակի հարցի մեկնաբանություն, նա փնտրում է դրան վերաբերող հատվածը կամ հատվածները:

Տեքստին այսպիսի ընտրողական մոտեցման թույլատրելիության համընդհանուր չափանիշներ չկան: Պատկերացնենք երեք ընթերցողների, որոնք համոզված են, որ վեպը պատումային տեքստ է, հետևաբար իրենց առջև նպատակ են դնում ծանոթանալու պատումի ընթացքին: Մեկը կարդում է «Հովտաշուշանը» և սահում-անցնում է բնության տեսարանների կամ շինությունների նկարագրությանը նվիրված հատվածների վրայով. ընթերցման վերջում նա ծանոթ է լինում վեպի սյուժեին. կորուստը գեղագիտական ընկալման թերիությունն է: Երկրորդը նույն սկզբունքով կարդում է «Սվանի ուղղությամբ»-ը: Երբ նա զգում է, որ իր կարդացած վերջին էջն ամբողջությամբ, ասենք, ծառերի կամ ծաղկած թփերի նկարագրություն էր, առաջ է անցնում, որպեսզի հետևի իրադարձությունների ընթացքին, բայց տասը-տասնհինգ էջ թերթելուց հետո հասկանում է, որ իր որոնումն անհույս է, և մի կողմ է դնում գիրքը: Անհույս է, որովհետև պարզվում է, որ նրան բաժին ընկած տեքստում ոչ մի տարբերություն չկա բնության, մարդու և իրադարձության նկարագրությունների միջև. դրանք բոլորը տեքստի գեղագիտական մոլեկուլներն ու հոգեբանական ատոմներն են, ընդ որում այդ բաղադրիչներից բացի՝ այդ տեքստում ուրիշը չկա: Երրորդը, որը կարդում է «Կարամազով եղբայրները», նույն՝ առաջ գնալու նկատառումով շրջանցում է փիլիսոփայական երկարաբան երկխոսությունները և ընթերցումն ավարտում է այն համոզմունքով, որ գրեթե դետեկտիվ ստեղծագործություն է կարդացել: Վեպի էությանը նա անհաղորդ է մնում ամենակա-

ընդ որ մասերը չկարդալու պատճառով: Այս երեք ընթերցողները տարբեր արդյունքների են հասնում. Բավզակի ընթերցողը նրա վեպի մասին բավականին բան իմանում է, Պրուստի ընթերցողը նրա վեպի մասին չի իմանում ոչինչ, Դոստոևսկու ընթերցողը նրա վեպի մասին ունենում է սխալ պատկերացում:

Բանավոր հաղորդակցման մեջ ևս ընկալվածը կարող է հաղորդվածից պակաս լինել. հասցեատերը կամ պարզապես ընկալողը² կարող է հաղորդման մի մասը չլսել: Դրա պատճառները տարբեր կարող են լինել՝ նյութական կամ հոգեկան. ասենք՝ աղմուկն է խանգարել, կամ ձայնը լավ չի հնչել, կամ ինչ-որ բան շեղել է ընկալողի ուշադրությունը, կամ նա ինչ-որ բան է հիշել ու սկսել է դրա մասին մտածել, և այլն:

Բոլոր թվարկված դեպքերը կարելի է **համառոտում** անվանել: Վ. Կոխը խոսում է «կրճատումների» կամ «համառոտումների» մասին³, սակայն կրճատումը դիտարկում է որպես փորձաստուգում կամ նկատի է առնում միայն անհասկանալի հատվածների կրճատումները, մինչդեռ համատարած արվող համառոտումները կարող են այլևայլ պատճառներ ունենալ:

Մեկ ուրիշ խումբ են կազմում տեքստի ծավալի մեծացման դեպքերը, երբ տեքստին **հավելում** է արվում: Նկատի չունենք ենթատեքստ կոչվածը կամ ներակա իմաստները. դրանք նախ՝ զուտ բովանդակային են, ապա՝ հեղինակային մտահղացմամբ կարող են նախատեսված լինել: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ ընթերցողը կամ թեկուզ հեղինակն ինքը արդեն իսկ որպես տեքստ ներկայացվածի՝ գրվածի կամ ասվածի լրացումներ է ստեղծում երբեմն ժանրային փոփոխությամբ, երբեմն՝ առանց դրա:

Հաղորդակցումը և մասնավորապես նրա վերջնափուլը՝ ըմբռնումը, անխուսափելի են դարձնում առնվազն մտովի արվող հավելումների ձևավորումը: Այս իրավիճակն է արձանագրում Ս. Հովհաննիսյանը՝ նկատելով. «Տեքստը տեքստ է ծնում. յուրաքանչյուր տեքստ վերլուծվում է, և այդ վերլուծությունն էլ իր հերթին տեքստ է»⁴: Հատկապես երբ այդ վերլուծությունը նյութական կերպարանք է ստանում, ակնհայտ է դառնում, որ առկա է նոր տեքստ՝ հավելում արդեն եղած տեքստին: Ընդ որում պարտադիր չէ, որ մի տեքստին մի ուրիշ ամբողջական տեքստ հավելվի. ավելացվածը կարող է լինել նաև տեքստային հատված, նույնիսկ մեկ նախադասություն կամ մեկ բառ: Պավլիչը իր «Բացառիկ վեպում», բացի նրանից, որ վերջաբանի հարյուր տարբերակ է առաջարկում, նաև մի քանի էջ պարզապես դատարկ է թողնում, որպեսզի ընթերցողը կարողանա գրել իր տարբերակը, այսինքն՝ անել իր ցանկացած հավելումը: Սա այն դեպքերից է, երբ հավելման հնարավորությունն ազդարարվում է: Բայց տեսականորեն այդպիսի հնարավորություն կա գրեթե բոլոր տեքստերում: Փոքրաթիվ բացառությունների մի խումբը կազմում են ձևային սահմանափակում ունեցող տեքստերը, ասենք՝ կանոնակարգված չափ ունեցող բանաս-

² Այս երկուսի տարբերությունը նույնն է, ինչ որ հեքիաթի վերջում երկրորդ և երրորդ խնձորները ստացողներինը:

³ Տե՛ս **Кох В.** Предварительный набросок дискурсивного анализа семантического типа // Новое в зарубежной лингвистике. Вып. VIII. М., «Прогресс», 1978, էջ 150-153:

⁴ **Հովհաննիսյան Ս.** Տեքստի հաղորդակցական արժեքը // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2010, 132. 2, էջ 74:

տեղծական տեսակները. դժվար թե որևէ մեկի մտքով անցնի, օրինակ, տասնհինգերորդ տող ավելացնել սոնետին: Մյուս խմբում գործում են բովանդակային սահմանափակումներ: Այդպես են ոտնձգություններից պաշտպանվում վավերացված սրբազան տեքստերը (դրանք այնքան անխոցելի են, որ ավելի հեշտ է փորձել մի ամբողջ տեքստ ավելացնել դրանց ցանկակազմին, բայց այդպիսի տեքստն էլ տեղնուտեղը պարականոն է հռչակվում): Հավելումների նկատմամբ վերաբերմունքը յուրօրինակ է իրավական փաստաթղթերում՝ սահմանադրությունից մինչև պայմանագիր: Դրանց պատահական հավելումները անթույլատրելի են համարվում, բայց հավելումը սկզբունքորեն չի բացառվում, միայն պահանջվում է, որ հավելման օրինականությունը հաստատող մեկ ուրիշ փաստաթուղթ կազմվի: Ի վերջո, ինչ էլ որ իր տեքստի մասին մտածի կամ ասի հեղինակը, վերջնական որոշում միակողմանիորեն կարող է կայացնել ընթերցողը. «Երկու տարի ես հրաժարվում էի այսպիսի անիմաստ հարցերի պատասխանելուց. «Քո ստեղծագործությունը բան է, թե՛ փակ»: Ես ի՞նչ իմանամ: Դա ձեր խնդիրն է, այլ ոչ թե իմը»⁵:

Տեքստի հավելումների հնարավորությունները բազմազան են:

Հավելում կարող է անել կամ տեքստի հեղինակը, կամ մեկ ուրիշը: Ըստ այդմ՝ կունենանք **նույնահեղինակ** և **այլահեղինակ հավելումներ**:

Նախնական տեքստի և հավելման սերտության աստիճանով կարելի է տարբերակել հավելման տեսակներ՝ **ներհյուսում**, **կցում** և **հարադրում**:

Ներհյուսման դեպքում հավելումն այնաստիճան բնականորեն է միահյուսվում տեքստին, որ տեքստն ամբողջացած է համարվում այդ հավելումով, ինչպես որ, արդեն ոչ լեզվական տեքստին հավելումներ անելով, Ջյուսմայերն ավարտին է հասցրել Սոցարտի ռեփլիեմը, կամ ինչպես որ Բալին ու Մեշեն «ապրանքային տեսք» են տվել Սոսյուրի դասախոսություններին: Գիտական տեքստում ներհյուսումներ են մեջբերումները: Կենցաղային հաղորդակցման մակարդակում ներհյուսված հավելումը նաև բանբասանքի կառուցման փորձված միջոց է, ընդ որում այս ասպարեզում ուրիշի խոսքի մեջբերումով ցանկալի արդյունքին հասնելու համար երբեմն կարող են բավարար լինել չնչին հավելումները:

Կցումը տեքստը հավելվածներով հագեցնելն է: Դրանք մեկնողական կամ վերլուծական հավելումներ են՝ գրավոր կամ բանավոր բացատրություն, ծանոթագրություն, բնաբան, առաջաբան, վերջաբան և այլն: Այդ արբանյակ-հավելվածները մեկ միասնական ընդարձակ տեքստի մասեր չեն դառնում, բայց նաև այնքան ինքնուրույնություն չունեն, որ նրանց հիմք տեքստից անկախ գոյություն վերապահվի:

Հարադրումը մի տեքստի հետ կապված նոր տեքստի ստեղծումն է. ելակետային և նորաստեղծ տեքստերը հարաբերականորեն ինքնուրույն են, կարող են իրարից անջատ գոյություն ունեցող համարվել, բայց նրանց միջև կապն ակնհայտ է: Դրանք կարող են լինել ինչպես տեքստի բովանդակությունը լրացնող, այնպես էլ վերլուծական հավելումներ՝ գրախոսություն, գիտական ուսումնասիրություն և այլն:

Տեքստի հիմնական մասի հետ հավելման կապի սերտության աստի-

⁵ Յոս Կ., նշվ. աշխ., էջ 464:

ձանը երբեմն կարող է արտաքուստ խաբուսիկ լինել և հստակացվել միայն բովանդակային հարաբերությունների դիտարկման միջոցով: Օրինակ՝ Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» յոթատորյակի «Ներածություն» հատորը, որը հրատարակչական առանձնացման հետևանքով նման է կցված տեքստի, իրականում բուն տեքստի մի ներհյուսված մասն է: Այլ բնույթ ունի Հուսեփոյի «Ճավա կղզու կավի լեզվի մասին» եռահատոր ուսումնասիրության առաջին՝ տեսական-ներածական հատորը, այն նաև բովանդակային մեծ ինքնուրույնություն ունի, ինչի հետևանքով համատարած կերպով հենց որպես առանձին աշխատություն էլ պատկերացվում է: Այստեղ խզումն այն չափի է հասնում, որ հարադրման տպավորություն է թողնում, մինչդեռ իրականում առկա է կցում:

Ներհյուսումը, կցումը և հարադրումը կարող են բնութագրվել ժանրի առումով: Այսպես՝ ներհյուսումը ենթադրում է ժանրի նույնություն (խախտում հնարավոր է միայն մեջբերումներում): Կցումը մեծ մասամբ կապվում է ժանրային բնութագրի փոփոխության հետ (հնարավոր բացառությունը կրկին գիտական տեքստերի հետ է կապված): Իսկ հարադրումը մյուս երկուսից տարբերվում է նրանով, որ հավասար հավանականություն ունեն նույն ժանրի տեքստերի (ասենք՝ վեպը շարունակող մի ուրիշ վեպ, հոդվածը շարունակող մի ուրիշ հոդված և այլն) և տարաժանր տեքստերի (ասենք՝ տարեգրության հիման վրա գրված վեպ, վեպի մասին մենագրություն և այլն) հավելումները:

Այս հավելումները իրարից որոշակիորեն տարբերվում են արդյունքներով: Ներհյուսման արդյունքը մեկ տեքստ է. ներհյուսման մասին չիմացողը այն չի էլ գիտակցում, և տեքստի գնահատման մեջ այն զուտ պատմական արժեք ունի: Կցման հետևանքով ձևավորվում է տեքստային սովորաբար ոչ մեծ կուտակախումբ: Հարադրումն արդեն գերտեքստի կազմավորման և միջտեքստային բազմազան կապերի հաստատման ոլորտին վերաբերող իրողություն է:

Հավելման այս երեք տեսակների մեջ կարելի է զուգահեռներ տեսնել լեզուների ձևաբանական տիպերին (թեքական, կցական և անջատական) տրվող ընդհանուր բնութագրումների հետ: Ներհյուսումը իր բնույթով համապատասխանում է թեքականությանը՝ անանջատ միասնությանը: Կցումը, որն արդեն իրեն տրված անվանումով էլ նման է լեզվատիպի բնորոշմանը, զուգահեռ է առանձին մասնիկների «սոսնձումով» բառաձև կազմելու սկզբունքին: Անջատական լեզուներում օժանդակ, բայց առանձին բառերի գործածումը ըստ էության տեքստերի հարադրման բառային զուգահեռն է:

Ըստ տեքստի նկատմամբ հավելման բովանդակային դիրքի՝ կարելի է տարբերակել **սկզբնահավելում**, **միջնահավելում** և **վերջնահավելում**:

Ամենահաճախ հանդիպողը մի տեքստի ժամանակային կամ տրամաբանական շարունակությունը ներկայացնող նոր տեքստի ստեղծումն է՝ վերջնահավելումը: Ասենք՝ մեկը մի վեպ է գրում, հետո մեկ այլ վեպ է գրում, որում պատմում է, թե ինչ է տեղի ունեցել նախորդ դեպքերից քսան տարի անց, հետո՝ ևս մեկ, արդեն եռահատոր վեպ՝ դրանից էլ տասը տարի անց տեղի ունեցածի մասին, իսկ ավելի ուշ արդեն մի ուրիշը

գրում է հետագա իրադարձությունների մասին:

Բանավոր հաղորդակցման ժամանակ էլ երբեմն գրուցակիցներից մեկը (անհամբերությունից, ցույց տալու համար, որ հասկացել է, որպես կատակ կամ որևէ այլ շարժառիթով) հաջողությամբ թե անհաջող շարունակում է մյուսի ասածը (այն, ինչ նա հասցրել է ասել)՝ երկու դեպքում էլ փաստորեն նոր տեքստ ստեղծելով:

Վերջնահավելման հավանականությունը և դրա նկատմամբ հեղինակային վերաբերմունքները տարբեր կարող են լինել: Դիկկենսի «Էդվին Դրուդի գաղտնիքը» վեպը ընթերցողից պարտադրաբար վերջնահավելում է պահանջում օբյեկտիվորեն՝ անավարտ մնացած լինելով, իսկ Պոյի «Պատմություն Արթուր Գորդոն Փիմի արկածների մասին» վիպակում այդ նույն պահանջը գեղարվեստական հնարք է:

Է. Աթայանը հաճախ գրքի եզրափակիչ հատվածում նշում է այն հարցերը, որոնք քննությունից դուրս են մնացել, իսկ դա նշանակում է՝ նախանշում է հնարավոր հավելումներից մի քանիսը, և որպես կանոն՝ դրանք նրա հաջորդ գրքի նյութն են դառնում: Սրան հակադիր մոտեցումը ուսումնասիրության ամփոփում-վերջաբանում տվյալ տեքստից արվող եզրակացությունների թվարկումն է, որի միջոցով տեքստը ներկայացվում է որպես «փակ ստեղծագործություն»: (Կամայական վերջնահավելումները կանխելու յուրօրինակ հնարք է, երբեմն օգտագործվում հատկապես ամերիկյան ֆիլմերում. վերջում գրվում են տեղեկություններ հերոսների հետագա ճակատագրի մասին):

Սկզբնահավելումների առանձնահատկությունն այն է, որ դրանցում ներկայացվածը ժամանակագրորեն (գիտական տեքստում՝ սովորաբար տրամաբանորեն) նախորդում է բուն տեքստում ներկայացվածին, բայց դրանք, որպես կանոն, գրվում կամ ասվում են բուն տեքստի ստեղծումից հետո: Այս ընդհանուր օրինաչափությունից շեղման բացառիկ օրինակ է տալիս Ժ. Դերիդան, որը հնարավոր է համարում ավելի վաղ գրված տեքստը բնութագրել իբրև նրանից հետո գրվելիք նոր տեքստի սկզբնահավելում. «Այդ բոլոր տեքստերը, որոնք պիտանի են երևի մեկ այլ տեքստի, որը գրելու ուժ երբևէ ունենալ ես շատ կուզեի, անվերջ նախաբանը լինելու, կամ էլ մեկ ուրիշի, որը գրելու քաջություն ես իմ մեջ երբեք չեմ գտնի, բնաբանը լինելու համար»⁶:

Սկզբնահավելումների հավանականությունն առավել մեծ է պատումային տեքստերի համար, որոնցում նախապատմությունը համահունչ է տեքստի բովանդակային բնույթին, և հավելումը իրականանում է որպես ներհյուսում: Սկզբնահավելում սովորաբար անում է այն ընթերցողը (և ընդհանրապես ընկալողը), որն իր երևակայության ուժով փորձում է գուշակել, թե ինչ կարող էր տեղի ունեցած լինել տեքստում ներկայացվածից առաջ: Սկզբնահավելում կարող է անել նաև տեքստի հեղինակը՝ ներկայացնելով իր պատմածի նախապատմությունը:

Որևէ մեկի տեքստին ուրիշի կցած առաջաբանը սկզբնահավելում չի կարող համարվել, քանի որ գրված է լինում՝ նկատի ունենալով արդեն գոյություն ունեցող տեքստը, որևէ առումով շարունակում է այն: Այդպիսի

6 Деррида Ж. Позитии. М., «Академический Проект», 2007, էջ 13-14:

առաջաբանը զուտ տարածականորեն է նախորդում տեքստին. իր բովանդակությամբ այն, անկասկած, վերջնահավելում է, միայն թե տեքստից առաջ է տեղադրված: Դրան հակառակ՝ գիտական ուսումնասիրության հեղինակային ներածությունը սկզբնահավելում է՝ անկախ նրանից, թե երբ է գրվել:

Միջնահավելումը հիմնված է ենթադրությունների վրա, թե ինչ կարող էր տեղի ունեցած լինել տեքստում հաջորդաբար ներկայացված երկու դրվագների միջև, կամ ինչ դատողություններով է հնարավոր անցում կատարել մի հատվածում ասվածից մյուսում ասվածին: Միջնահավելումն իր բնույթով չի տարբերվում նախորդ երկուսից, կառուցվում է նույն սկզբունքով, ինչ որ նրանք. այն կամ նախորդ հատվածի վերջնահավելում է, կամ հաջորդի սկզբնահավելում: Տարբերությունն այն է, որ սկզբնահավելումը և վերջնահավելումը ամբողջ տեքստին արվող հավելումներ են, իսկ միջնահավելումը տեքստի մի հատվածին արվող հավելում է: Եզրային դիրքերում դրանք նույնիսկ կհամընկնեն: Այսպես՝ տեքստի առաջին հատվածամասի սկզբնահավելումը այդպիսին է նաև ամբողջ տեքստի համար, եթե նույնիսկ տեղադրվում է այդ հատվածամասից հետո և դրանով տեքստում ինչ-որ միջակա դիրք է գրավում: (Դարձյալ ֆիլմերի հետ զուգահեռ անցկացնելով՝ կարելի է հիշել, թե ինչպես երբեմն առաջին դրվագին հաջորդողի սկզբում, օրինակ, գրվում է. «Դրանից երեք օր առաջ», այնուհետև ներկայացվում են առաջին դրվագից երեք օր առաջ կատարված դեպքերը):

Միջնահավելումը բացթողումների լրացումն է, այլ կերպ ասած՝ բացթողում պարունակող տեքստի վերծանումը: Ժյուլ Վեռնի «Նավապետ Գրանտի զավակները» (հայերեն հրատարակության մեջ՝ «որդիները») վեպն ամբողջությամբ նամակի ջնջված հատվածների վերականգնման հաջորդական փորձերի (միջնահավելումների) և դրանց ստուգման պատմությունն է: Դե-տեկտիվ ստեղծագործություններում բացթողման նպատակը պատումին լրացուցիչ լարվածություն հաղորդելն է. ինչ-որ բան լռության է մատնվում, և միայն պատմվածքի կամ վեպի վերջում խուզարկուն անում է անհրաժեշտ միջնահավելումները՝ պատմելով, թե ինքը ինչ է մտածել, ուր է գնացել, ում հետ ինչի մասին է խոսել նկարագրված իրադարձությունների միջակայքերում: Գիտական տեքստում բացթողում սովորաբար արվում է, եթե հեղինակը ինչ-որ բան ինքնին հասկանալի է համարում. ասենք՝ հենց այս հոդվածի հենց այս պարբերությունը կարող էր և գրված չլինել:

Միջնահավելումները հաճախ արվում են «տեքստ տեքստում» սկզբունքով, որ ամենևին չի նշանակում, թե այդ սկզբունքի վրա հիմնված բոլոր կառույցները անպայման միջնահավելումներ են: Մի կողմից՝ հայտնի են բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններ, որոնցում հենց բուն տեքստն է դրվում բովանդակայնորեն երկրորդական և միայն հավաստիության տպավորություն ստեղծելու նպատակ ունեցող եզրամասերի միջև որպես ինչ-որ մեկի պատմած կամ գրի առած պատմություն կամ նամակների շարք: Մյուս կողմից՝ մի տեքստի մեջ կարող են ներդրվել նրա հետ ոչ մի բովանդակային կապ չունեցող տեքստեր, որոնք ոչ միայն չեն կապում, այլև, ընդհակառակը, կտրում, անջատում են տեքստի երկու հատվածամասերը: Դրանք տեքստի հետ տարածական կապի մեջ են հայտնվում,

բայց ոչ ավելին, ուստի չեն կարող միջնահավելումներ համարվել. այդպիսի հատվածամասեր են, օրինակ, «նահանգապետ» Սանչո Պանսայի դատին ներկայացվող պատմությունները Սերվանտեսի վեպում:

«Մեկուսացված վիճակում վերցված համակարգը անգամ նրա մեջ պայթյունային պահերի ներածման դեպքում որոշակի ժամանակում կսպառեր դրանք: Համակարգի մեջ դրսից տարրերի մշտական սկզբունքային ներածումը նրա շարժմանը միաժամանակ գծայնության և անկանխատեսելիության բնույթ է տալիս»⁷: Յու. Լոտմանը դա ասում է «տեքստ տեքստում» կոչվող ներդրման կապակցությամբ, սակայն սկզբունքորեն կարելի է այսպիսի գնահատական տալ բոլոր հավելումներին: Նախօրինակ տեքստի հիման վրա հավելումով կարող են կազմվել ոչ միայն այնպիսի տեքստեր, որոնք որոշ նոր տարրեր են պարունակում (սա սովորական ներհյուսումն է), այլև այնպիսիները, որոնք հիմնականում նոր տարրերից են կազմված՝ հեղինակային տեքստը միայն որպես հենարան կամ ելակետ ունենալով: Այդպիսի ելակետեր կարող են լինել հեղինակային տեքստի տարրեր հատվածամասեր կամ առանձին բաղադրիչներ, անգամ մեկ բառը, որի արդյունարար ներունակությունը տարրեր գնահատումների է արժանանում. եթե Յ. Կրիստևան բառի մեջ ընդգծում է նոր բառի ավելացման հնարավորություն ընձեռելը⁸, ապա Ս. Հովհաննիսյանը բառի մեջ մի ամբողջ տեքստի սերման ներլարուն լիցք է տեսնում. «... յուրաքանչյուր բառ իր իմաստի շնորհիվ կարող է ծնունդ տալ բոլորովին այլ տեքստի, և կարող ենք ասել, որ մեկ տեքստը ներառում է այնքան տեքստ, որքան բառից բաղկացած է ինքը»⁹:

Նոր կազմվող տեքստի մեջ նախնական տեքստից կարող է ընդգրկված լինել միայն նորի ելակետ դարձած մասը: Օրինակ՝ Մ. Ֆուկոն խոստովանում է, որ իր «Բառեր և իրեր»-ի ստեղծման ազդակը եղել է Բորխեսի պատմվածքում չինական հանրագիտարանի նկարագրությունը, որն ինքը մեջբերում է¹⁰, և դա այդ երկու տեքստերի միակ ընդհանուր մասն է: Այս դեպքում, իհարկե, ներհյուսումով կազմված մեկ միասնական տեքստ չի ստացվում, այլ առկա են լինում հատվող տեքստեր՝ հատումով ձևավորված միջտեքստային կապեր ունեցող տեքստերի հարադրում:

Տեքստի յուրաքանչյուր տարր հավելման առիթ և ելակետ կարող է դառնալ: Տեքստի մասին կարծիք կա, որ այն նման է կոճղարմատի, որի ցանկացած մասից որևէ ուղղությամբ անկանխատեսելի ընձյուղ կարող է աճել՝ ի տարբերություն սովորական արմատից միագիծ աճող ծառի¹¹: Իհարկե, այդպես կառուցված տեքստեր կան, բայց դա տեքստի տարրերի կազմակերպման համընդհանուր և միակ սկզբունքը չէ. կան և՛ «կոճղարմատային», և՛ «արմատային» տեքստեր, եթե նկատի ունենանք տեքստը՝ իր նշանակիչով հանդերձ, և ոչ թե նրա բաղադրիչների զուտ իմաստային կա-

7 Լոտման Յու. Կուլտուրա և արվեստ // Լոտման Յու. Տեմիոսֆերա. ՏԻԲ., «Իսկուստվո-ՏԻԲ», 2004, էջ 72:

8 Տե՛ս Կրիստևա Յու. Տառ, ժողովուրդ և ռոման // Կրիստևա Յու. Ինտրոդուկտորնա լուր: Քուլտուրա ՏԻԲ., «ՐՕՏՏԻՔՆ», 2004, էջ 167:

9 Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 74:

10 Տե՛ս Ֆուկո Մ. Տառ և Վեճ: Արխեոլոգիա գումանիտարնա լուր. Մ., «Քրոցրեսս», 1977, էջ 31:

11 Տե՛ս Դելեզ Յ., Գատտարի Փ. Երեսնա տառ: Կապիտալիզմ և շիզոֆրենիա. Էկատերինբուրգ, «Մ-Ֆակտորիա», Մ., «Աստրել», 2010, էջ 6-21:

պերը: Իսկ հավելումները հենց կոճղարմատի աճի բազմակիությունն ունեն: Այնպես որ իրականում կոճղարմատի ըմբռնումը կարող է դրվել ոչ թե բուն տեքստի կառուցման, այլ նրան արվող հավելումների բնութագրման հիմքում:

Է. Աթայանը նոր տեքստի աղբյուր է համարում նաև տեքստի տարրերի փոխարինումները¹²: Փոխարինումը պարզ գործողություն չէ. այն ըստ էության տեքստի միևնույն մասում կատարվող համառոտման և հավելման գուգակցում է, և նորությունը միայն նրանց տարածական համատեղումն է: Փոխարինումը կառուցման սկզբունք է ծաղրանմանության (պարողիայի) մեջ. այստեղ տեքստի որոշ հատվածներ պահպանվում են, որպեսզի երկու տեքստերի կապն ակնհայտ լինի, բայց որոշ հատվածներ էլ պարտադիր կերպով փոխարինվում են ուրիշներով: Ծաղրանմանությունը ձգտում է ստեղծելու ելակետայինից իմաստով տարբերվող տեքստ, բայց պահպանում է նշակարգը (կողը), այսինքն՝ մնում է նույն լեզվի շրջանակում: Դրան հակառակ՝ փոխարինման մեկ այլ յուրահատուկ դրսևորում՝ թարգմանությունը, ձգտում է ստեղծել ելակետայինին հնարավորին չափ մոտ իմաստով տեքստ, բայց փոխում է լեզվական նշակարգը:

Տեքստի բաղադրիչների փոխարինման ընթացքի ակնառու պատկերն են ներկայացնում հարցն ու պատասխանը, որոնցում համառոտման և հավելման ենթակա տեքստամասերը դրվում են կողք կողքի: Դրա ծայրագույն դրսևորումը հանելուկն է, որն ամբողջությամբ այդպիսի մասերից կազմված ինքնուրույն փոքրածավալ տեքստ է: Հանելուկը յուրահատուկ է նաև նրանով, որ այն ընկալողի գործուն մասնակցությունն ակնկալող տեքստ է. այստեղ տեքստի երկրորդ, հավելվող մասը նախատեսում է հեղինակը, բայց պահանջվում է, որ այդ մասը փաստացիորեն՝ որպես առկայացված տեքստ, ստեղծի նա, ում ուղղվում է հարցը:

Տեքստի ծավալափոխությունները տեքստի միակ կերպարանափոխությունները չեն: Գրավոր տեքստը նույնիսկ նույն ծավալով (ամբողջությամբ կամ համառոտման դեպքում նույն մասերը) ընթերցելու դեպքում երկու ընթերցողներ կարող են դրվագների տարբեր հաջորդականություններով կարդալ այդ տեքստը՝ որպես դրա արդյունք կարդացած լինելով բավականաչափ տարբեր տեքստեր: Անգամ պատումային տեքստերի ընթերցողները հաճախ այդպես են վարվում: Օրինակ՝ թվում է, թե արկածային կամ դետեկտիվ ստեղծագործության ընթերցողը ժանրի առանձնահատկությամբ պայմանավորված պարտավորվածություն ունի հետևելու սյուժեի զարգացման գծին, բայց նա կարող է ընդմիջել հաջորդական ընթերցումը, կարդալ վերջը, որպեսզի, ասենք, համոզվի, որ հերոսը ողջ է մնում, կամ իմանա, թե ով էր հանցագործը, իսկ դրանից հետո շարունակել այն էջից, որտեղ որ ընթերցումն ընդմիջել էր: Առավել մեծ է ընթերցողի ազատությունը գերտեքստային կառուցվածք ունեցող տեքստերում, օրինակ՝ հանրագիտաբաններում:

Երկրի մակերևույթին տեղաշարժվելիս մարդն ինքն է ընտրում շարժման ուղղությունը և անցնելիք ճանապարհը: Բնական խոչընդոտներից

12 Տե՛ս **Атаян Э. Р.** Язык и внеязыковая действительность. Опыт онтологического сравнения. Ер.: Изд-во Ереванск. ун-та, 1987, էջ 74:

բացի՝ նրան ոչինչ չի կաշկանդում ընտրություն կատարելիս: Եթե պատկերացնենք մի դաշտ, որը մարդը պիտի անցնի, նրա ուղու ոչ մի կանխատեսում չի կարող հազարավոր մյուսներից նախընտրելի կամ հավանական լինել. նա կարող է ընտրել ամենակարճ ճանապարհը, կարող է գնալ երկար ճանապարհով, կարող է գնալ կածանով կամ խոտերի վրայով, կարող է պտույտներով առաջ գնալ՝ երբեմն նույն տեղով նորից անցնելով, կարող է շեղվել իր իսկ նախատեսած ուղեգծից, որպեսզի մոտենա մի ծաղկի կամ աղբյուրի կամ շրջանցի որևէ դժվարանցանելի տեղանք, և այսպես՝ շարունակ: Ենթադրվում է, որ նույնը կարող է անել տեքստային տարածությունը հաղթահարողը: Նա ազատ է՝ հետևելու հեղինակային ուղենիշ ցուցանակներին (ասենք՝ գլուխների համարակալմանը) կամ անտեսելու դրանք. «... շարժումն արդեն կետից կետ չի ընթանում, այլ դառնում է անընդհատ, առանց նպատակի և ուղղության, առանց ելնելու և հասնելու»¹³: Դիպուկ բնորոշում է տալիս Ռ. Բարտը. «գրոսանք տեքստով»¹⁴:

Ամեն մարդ կարող է հարաբերականորեն ազատ ընտրություն կատարել իրական տարածության մեջ: Հետևաբար ամեն ընթերցող պիտի կարողանա հարաբերականորեն ազատ ընտրություն կատարել տեքստային տարածության մեջ: Սա, իհարկե, ընթերցողի տրամաբանությունն է, որին հեղինակներից քչերն են համաձայն լինում, սակայն երբեմն հեղինակները միտումնավոր ընձեռում են այդ հնարավորությունը: Դա կարող է լինել խաղ մեծերի համար՝ «հետմոդեռնիզմ» անվանումով¹⁵: Դա կարող է լինել խաղ փոքրերի համար՝ «գիտելիքների հաղորդում»¹⁶ կամ «ունակությունների զարգացում»¹⁷ անվանումով:

Յուրաքանչյուր տեքստ իր առանձին մասերը տարբեր հաջորդականություններով միացնելու անհաշվելի հնարավորություններ է տալիս: Դրանցից ամեն մեկի արդյունքը մի տեքստ է, որը սովորաբար ծավալով հավասար է լինում նախօրինակին կամ ներառում է նրա մի մասը, բայց կարող է և ավելի մեծ ծավալ ունենալ: Հեղինակի ստեղծած ամբողջական տեքստը իր հիման վրա նոր տեքստերի ձևավորման բոլոր հնարավորություններն ամփոփող տեքստ է՝ **մակրոտեքստ**: Մակրոտեքստի ընձեռած յուրաքանչյուր հնարավորության յուրաքանչյուր մարմնավորում մակրոտեքստի ճանաչաթման մի բեկում է տվյալ ընկալողական ուսայնակով՝ մի **միկրոտեքստ**: Այդ բոլոր Աթենաս տեքստերը դուրս են գալիս նախնական Ջևս տեքստի գլխից՝ որպես նրա հարազատ, բայց անհնազանդ ու անհաշտ զավակներ: Որպես այդպիսի տեքստերի ամբողջություն դիտված տեքստը

13 Делез Ж., Гваттари Ф., նշվ. աշխ., էջ 590:

14 Барт Р. Текстовый анализ одной новеллы Эдгара По // Барт Р. Избранные работы: Семиотика. Поэтика. М., «Прогресс», 1989, էջ 429:

15 Վերլուծաբանների ամենափրելի օրինակը Պավիչի «Խազարական բառարան» վեպն է, որը, համակարգչային հաշվումների համաձայն, ընթերցման երկուսուկես միլիոն տարբերակ ունի:

16 Տևս, օր. Зарещкий А. и др. Энциклопедия профессора Фортрана. М., «Просвещение», 1991. հեղինակները նշում են, որ իրենց գիրքը կարելի է սկսել կարդալ ցանկացած տեղից, բայց միաժամանակ խորհուրդ են տալիս առաջնորդվել մի քարտեզով, որում, օրինակ, 166-րդ էջին հաջորդում է 12-րդը, իսկ 132-րդ էջից 108-րդը տանող ճանապարհն անցնում է 24-րդով:

17 Տևս, օր. Գլովեր Դ., Մաթեմատիկական որոնումներ, Եր., «Զանգակ», 2013. շարքի չորս գրքերում ամեն խնդրից հետո տարբեր էջեր են առաջարկվում որպես շարունակություն՝ ըստ նրա, թե խնդրի որ լուծումն է ընտրվել:

կարող է բնորոշվել որպես բազմադեմ և բազմակազմ տեքստ՝ **բազմատեքստ**:

«Մակրոտեքստ» և «միկրոտեքստ» անվանումները տեքստերի ծավալային բնութագրում չեն տալիս և նրանց ծավալային հարաբերակցությունը չեն արտացոլում, այլ իմաստային. մակրոտեքստի մեծությունը զուտ տրամաբանական գնահատում է: Մակրոտեքստն ու միկրոտեքստը կարող են բնութագրվել որպես **եպիկետային** և **արդյունային** տեքստեր: Հասկանալի է, որ շարունակական տեքստասերման շղթայում այս գնահատումները հարաբերական են. որևէ միկրոտեքստ (արդյունային տեքստ) կարող է իր հերթին ծնունդ տալ մի նոր տեքստի և նրա հարաբերությամբ ու նրա համար հանդես գալ որպես եպիկետային մակրոտեքստ:

Պարզ է, որ բազմատեքստը միանգամայն տարբեր է գերտեքստից, որը նույնպես տեքստերի բազմություն է, բայց բոլորովին այլ սկզբունքով է կազմվում: Գերտեքստը կազմված է տարբեր ինքնուրույն տեքստերից, որոնց միջև կապ է հաստատված, մինչդեռ բազմատեքստը նույն տեքստի կառուցվածքային-իմաստային տարբերակների ամբողջությունն է: Ա. Վեժբիցկայի ներկայացրած երկտեքստից¹⁸ բազմատեքստը տարբերվում է ոչ միայն բաղադրիչների քանակով (երկու կամ շատ), այլև նրանց բնույթով. երկտեքստում միավորվում են հեղինակի հաղորդած և իր «ժապավենի վրա» ընկալողի գրանցած տարբերակները: Բազմատեքստը չի նույնանում նաև Յ. Կրիստևայի տարբերակած գենոտեքստին կամ ֆենոտեքստին: Գենոտեքստը լեզվական տեքստի մինչլեզվական հիմքն է՝ դեռևս լեզվական կառուցվածքի չվերածված արտահայտման հնարավորությունների ոլորտ, որում տեղի է ունենում «նշանակայնացումը»՝ նշանակյալի ձևավորումը¹⁹, իսկ բազմատեքստը լիովին կամ մասամբ համատեղելի նշանակիչներով ֆենոտեքստերի՝ կոնկրետ մարմնավորում ունեցող տեքստերի համակցություն է:

«Ընթերցողական տեքստերը» սովորաբար հեղինակային ամբողջական տեքստից արվող տարաբնույթ քաղվածքներ են կամ քաղվածքների հետագա ծավալումներ: Այս կապակցությամբ ծագում է ևս մեկ խնդիր. բոլոր հնարավոր տեքստ-մեկնաբանությունների հաշվարկման մեջ պետք է արդյոք նկատի ունենալ նաև հեղինակի կազմած ամբողջական մակրոտեքստը, որը առնվազն որպես հնարավորություն ներառում է իր վրա հիմնված միկրոտեքստերը: Այս հարցի դրական պատասխանը նշանակում է, որ տեքստը՝ դիտված որպես իր բոլոր հնարավոր մեկնաբանությունների բազմություն, պիտի որպես իր մի տարր ներառի նաև ինքն իրեն: Հետո նույն հարցը կծագի ներառվածի կապակցությամբ, և այդ ընթացքը անվերջ կլինի: Այդ ընթացքի արդյունքը կլինի ռեկուրսիվ մաս պարունակող, կարելի է ասել՝ մասնակի ռեկուրսիվություն ունեցող բազմություն: Բացասական պատասխանն էլ անընդունելի է, քանի որ այդ դեպքում ստացվում է, որ ոչ բոլոր հնարավորություններն են հաշվի առնվում:

18 Տե՛ս **Վեժբիցկա Ա.** *Метатекст в тексте // Новое в зарубежной лингвистике. Вып. VIII. М., «Прогресс», 1978, էջ 403:*

19 Տե՛ս **Կրիստեյա Յու.** *Порождение формулы // Кристева Ю. Избранные труды: Разрушение поэтики, էջ 295-300:*

Այսպիսով՝ բազմատեքստի մեջ մակրոտեքստի ներառման վերաբերյալ հարցադրումը (իսկ դա փաստորեն հարցադրում է հեղինակի և ընթերցողների իրավունքների հարաբերակցության վերաբերյալ) հանգեցնում է Ռասելի պարադոքսում²⁰ նկարագրվող իրադրությանը:

Իր ձևակերպումով Ռասելի պարադոքսը որոշակի տեսակի բազմություններին («դասերին») է վերաբերում. իրեն որպես իր տարր չպարունակող բազմությունների բազմությունը պարունակում է արդյոք ինքն իրեն. եթե այո, ուրեմն այն պարունակում է իր պարունակած տարրերի սահմանմանը հակասող բազմություն, իսկ եթե ոչ, ապա, ըստ իր սահմանման, պիտի պարունակի նաև իրեն: Բազմությունների մաթեմատիկական և տրամաբանական տեսությունները փորձում են լուծել Ռասելի պարադոքսը՝ շրջանցելով այն²¹, ասելով, որ այդպիսի բազմություն չի կարող սահմանազատվել: Տեքստագիտությունը կարող է միանգամայն այլ մոտեցում ունենալ՝ ոչ թե ջանալով վերացնել պարադոքսը, այլ հաստատելով այն որպես տեքստի առանցքային օրինաչափություն: Տեքստը պարադոքսային է, և դրա մեջ է տեքստի հմայքը: Պարադոքսից խուսափելը հավասարազոր է իր ամենագործության սահմանափակ ընդգրկումը բացահայտորեն կամ ոչ բացահայտորեն ընդունող ձևական տրամաբանության անգործությունը տեքստի հետ առնչվելու կանոն դարձնելուն, հավասարազոր է տեքստի բազմաչափ տարածությունը հարթության վրա նրա արտապատկերումով փոխարինելուն՝ առանց թռիչքի կամ խորասուզման հնարավորություն թողնելու: Մինչդեռ միայն թռիչքի և խորասուզման շնորհիվ ընթերցողը կարող է ճանաչել տեքստը, հեղինակին և իրեն:

Summary

TEXT VARIANTS AND RUSSELL'S PARADOX

Ashot S. Abrahamyan

Key words – Text, variant, interpretation, space, author, reader, abridgment, addition, sequence, set.

Alongside with a multitude of merely semantic interpretations, the text's space characteristics – volume and sequence of the read text parts, act as important factors favoring the emergence of alternative versions of the text. Abridgement and addition are the two main text volume changes. Replacement is not an elementary procedure; it is a local combination of abridgement and addition. Additions can be classified by a number of criteria: by their author, level of their closeness to the original text and by their content correlation with it. The author's text bears the opportunity of creating an infinite number of reader variants. Hence, it can be characterized as a macrotext, on the basis

20 Տե՛ս Րասել Բ. *Փիլосоֆիա логического атомизма*. Томск, «Водолей», 1999, էջ 87–91:

21 Տե՛ս *Френкель А., Бар-Хиллел И.* *Основания теории множеств*. М., «Мир», 1966, էջ 16–19, *Гусев С.* и др. *Логика*. М., «Проспект», 2011, էջ 302–305:

of which individual manifestations – reader microtexts can be formed. The text appears as a variety of diverse texts, and thus can be called polytext. There arises a situation like the one in Russell’s paradox. However, if the logical and mathematical solutions to Russell’s paradox lead to its elimination, the theory of text can take a different approach, recognizing the text’s paradoxicality as one of its characteristic features.

Резюме

ВАРИАНТЫ ТЕКСТА И ПАРАДОКС РАССЕЛА

Ашот С. Абраамян

Ключевые слова – Текст, вариант, интерпретация, пространство, автор, читатель, сокращение, прибавление, последовательность, множество.

Наряду со множественными чисто семантическими интерпретациями, в качестве важного фактора, способствующего возникновению разночтений, выступают пространственные характеристики текста – объем и последовательность частей прочтенного текста. Основные изменения объема текста – сокращение и прибавление. Замена не является элементарной процедурой: это локальное совмещение сокращения и прибавления. Прибавления можно классифицировать по нескольким критериям: по их автору, по степени тесноты их связи с исходным текстом и по их содержательному соотношению с ним. Авторский текст включает в себе возможность образования бесчисленного множества читательских вариантов; исходя из этого, его можно характеризовать как макротекст, на основе которого образуются частные проявления – читательские микротексты. Текст таким образом предстает как множество различающихся друг от друга текстов, которое можно назвать политекстом. При этом возникает ситуация, описанная в парадоксе Рассела. Однако если логико-математические разрешения парадокса Рассела сводятся к его устранению, то теория текста может идти другим путем, признав парадоксальность текста одним из его характерных свойств.

ՀԵՅՉԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ համալիրում հանդես է գալիս 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016

ՀՀԿ համահայկական հանդես